3647

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«16» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 143 - 25

Նախաձեռնող՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
ք. Քաջարան, Լեռնագործների 18, 3309

Գործունեությունը՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի արտադրական պահեստի կառուցում
Սյունիքի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 143 - 25

«16» մայիսի 2025թ.

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի արտադրական պահեստի կառուցման նախագծային փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՄԿ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն (այսուհետ՝ ՇՄԱԳ), նախագծային փաստաթուղթ
Կատեգորիան՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Սյունիքի մարզ, Քաջարան համայնք, քաղաք Քաջարան

Ներածական մաս. «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՄԿ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ «ԶՊՄԿ» ՓԲԸ կամ Կոմբինատ) կայուն զարգացման քաղաքականության շրջանակներում նախատեսում է արտադրական գործունեության բնապահպանական, սոցիալական և անվտանգային բաղադրիչների բարելավում:
Սույն աշխատանքային նախագծով նախատեսվում է նոր արտադրական պահեստի և օժանդակ շինությունների կառուցում: Նախագծի կազմման համար հիմք է հանդիսացել «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի և «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի միջև կնքված «Աշխատանքների կատարման մասին» պայմանագիրը:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ բ. ենթակետի՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Ա» կատեգորիայի:

Նախատեսվող գործունեության շրջանակներում պլանավորված՝ արտադրական պահեստի և երկու օժանդակ շինությունների կառուցման տարածքը գտնվում է «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի արտադրական տարածքում: Կոմբինատի կազմում ներառված են Քաջարանի պղնձմոլիբդենային հանքավայրն (բացահանքը) իր լցակույտային տնտեսությամբ, հարստացուցիչ ֆաբրիկան և Արծվանիկի պոչամբարը: Կոմբինատը ձեռք է բերել 22 մլն. տ/տարի արդյունահանման թույլտվություն (պետական փորձաքննական № ԲՓ 108 դրական եզրակացություն՝ հաստատված 2016 թվականի դեկտեմբերի 16-ին): Գործող բացահանքը գտնվում է Քաջարան քաղաքից 1.7-2.7 կմ հեռավորության վրա՝ Ողջի գետի աջակողմյան հատվածում: Հարստացուցիչ ֆաբրիկան գտնվում է Ողջի գետի ձախակողմյան հատվածում՝քաղաքի բնակելի հատվածից 300 մ հեռավորության վրա: Գործող Արծվանիկ պոչամբարը տեղադրված է Ողջի գետի ձախակողմյա Արծվանիկ վտակի կիրճում՝ հարստացուցիչ ֆաբրիկայից 34.5 կմ հեռավորության վրա:

Նկարագրական մաս. Արտադրական պահեստը նախատեսված է արտադրական գործընթացի ապահովման և սպասարկման նպատակով անհրաժեշտ սարքավորումների պահման համար: Այն չջեռուցվող է: Արտադրական պահեստի սանիտարապաշտպանիչ գոտին գտնվում է "ՀՊՄԿ" ՓԲԸ-ին պատկանող արտադրական տարածքում:

Նախատեսվող գործունեության համար նախատեսված շինությունների մակերեսները զբաղեցնում են՝ արտադրական պահեստ - 5544 մ², օժանդակ շինություններ - 1301.5 մ²: Համաձայն նախագծի՝ արտադրական պահեստը C-D, 1-22 առանցքներում ունի 24x117 մ, իսկ D-E, 7-22 առանցքներում՝ 32x85.5մ չափսեր: C-D առանցքի երկարությունը 24 մ է, իսկ D-E առանցքինը՝ 32 մ: Պահեստի հիմքերը նախատեսվում է իրականացնել երկաթբետոնե կետային հիմքերով: Պահեստը նախագծված է շրջանակակապային ամրացման սխեմայի միջոցով: Շրջանակները նախատեսված են լայնակի ուղղությամբ, իսկ կապերը՝ երկայնական ուղղությամբ: Շրջանակի պարզունակները 24 մ և 32 մ բացվածքով հեծաններ են, նախագծված են երկճյուղ՝ 1100 մմ ճյուղերի լոկալ առանցքների հեռավորություններով: Արտաքին պատերը նախատեսված են իրականացնել 120 մմ հաստությամբ սենդվիչ տիպի պատի պանելներից: Տանիքը նախատեսված է իրականացնել 120 մմ հաստությամբ սենդվիչ տիպի ծածկի պանելներից: Տանիքը երկթեք է, նախատեսված կազմակերպված արտաքին ջրահեռացմամբ: Բնական լուսավորությունը ապահովելու համար պահեստի չորս կողմերից նախատեսվել են պատուհաններ: Հատակները հարթ են, երկաթբետոնից նախատեսված: Պահեստում նախատեսված են երեք հիմնական դարպասներ իրենց դռնակներով:
Արտադրական պահեստը սարքավորված է երկու կամրջային ամբարձիչներով: Մեկ ամբարձիչը՝ Q=20 տ և երկրորդը՝ Q=50 տ բարձրացնող հզորությամբ: Ամբարձիչների սպասարկման և շահագործման համար նախատեսված են մետաղական աստիճաններ և հարթակներ:

Աշխատանքային նախագծով նախատեվում է նոր կառուցվող արտադրական պահեստին կից կառուցել 2 օժանդակ շինություններ, որոնց թիվ 1 օժանդակ շինությունն ունի 945 մ² մակերես, իսկ թիվ 2-ը՝ 356.5 մ² մակերես /շինությունների մակերեսը ընդհանուր կազմում է 1301.5 մ²/: Թիվ 1 օժանդակ շինությունն A-B և 1-4 առանցքներում չորս հարկանի է, որը նախատեսված է որպես վարչական (ադմինիստրատիվ) մաս: Յուրաքանչյուր հարկում գտնվում է սանհանգույց, աշխատասենյակներ, օժանդակ սենյակներ: Հարկերի կապը իրականացվելու է աստիճանավանդակով, որը նախատեսվում է իրականացնել մետաղական սանդղահեծաններով և երկաթբետոնե աստիճաներով: Թիվ 2 օժանդակ շինությունը D-E և 4-7 առանցքներում 31x11.5 մ առանցքային չափսերով և 16.5 մ բարձրությամբ շինություն է: Օժանդակ շինությունը քառահարկ է:

Օժանդակ շինության հիմքերը նախատեսվում է իրականացնել երկաթբետոնե կետային հիմքերով: Հիմնակմախքը մետաղական է: Միջհարկային ծածկերն իրականացվելու են երկաթբետոնից: Արտաքին պատերը նախատեսված է իրականացնել 120 մմ հաստությամբ սենդվիչ տիպի պատի պանելներից: Տանիքը նախատեսված է իրականացնել 120մմ հաստությամբ սենդվիչ տիպի ծածկի պանելներից: Տանիքը միաթեք է, նախատեսվել է կազմակերպված արտաքին ջրահեռացում: Բնական լուսավորությունը ապահովելու համար նախատեսվել են պատուհաններ: Շինությանը կից տեղադրված է արտաքին մետաղական աստիճանավանդակ՝ տանիք բարձրանալու և հարկերի մարդկանց տարահանումը ապահովելու համար:

Քանի որ արտադրական պահեստի և օժանդակ շենքի տարածքում խմելու ջրի և կենցաղային կոյուղու ցանցեր չկան, ադմինիստրատիվ շենքում, որը գտնվում է թիվ 1 օժանդակ շենքում, նախատեսվում է տեղադրել 2 մ³ ծավալով բաք և CR 1S տիպի պոմպ: Ջուրը բերվելու է ավտոցիստեռնով: Բաքի և պոմպի հավաստիի աշխատանքն ապահովում է ադմինիստրատիվ շենքի, ինչպես նաև D-E և 4-6 առանցքներում օժանդակ շինության խմելու ջրի պահանջները: Բաքը նախատեսված է 3 օրվա խմելու ջրի պահուստ շենքի բնակի համար:

D-E և 4-6 առանցքներում թիվ 2 օժանդակ շինության կենցաղային կոյուղու կեղտաջրերը ուղղվում են դեպի D=2000 մմ, H=3.0 մ կոյուղու հոր, իսկ ադմինիստրատիվ շենքի (օժանդակ շինություն 1) կեղտաջրերը ուղղվում են դեպի հորատման փոս: Ըստ անհրաժեշտության կեղտաջրերը դատարկվում են ասանիզացիոն մեքենաներով և հեռացվում դեպի մոտակա կոյուղու կենցաղային մաքրման կայան:

Արտադրական պահեստում և օժանդակ շինություններում լուսավորությունը իրականացվելու է ՕՍՄ-6 և ՕՍՄ-9 տիպերի էլեկտրական վահանակներով և լուսադիոդային լուսատուներով: Արտադրական պահեստում և օժանդակ շենքում շահագործման մեջ գտնվող տեխնիկական սարքերը հագեցած են ազդարարման միջոցներով, անհրաժեշտ հսկիչ-չափիչ սարքերով, ինչպես նաև ունեն գործող միջոցներ՝ գերծանրաբեռնվածությունից պաշտպանության համար: Աշխատատեղերում բարձր աղմուկի դեպքում նախատեսվել են նաև լուսային ազդանշաններ: Ազդանշանների պայմանական նշանները տեղադրվելու են երևացող տեղերում: Էլեկտրաէներգիայի անջատման կամ այլ պատճառներով սարքի կանգառի դեպքերում բոլոր էլեկտրաշարժիչների շարժաբերները, որոնց ինքնագործարկումն անթույլատրելի է, ունենալու են դրանց ինքնագործարկումը կանխարգելող սարք՝ էլեկտրաէներգիայի հաղորդման վերականգնման դեպքում:

ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացվել է նախատեսվող գործունեության իրականացման այլընտրանքային տարբերակների դրական և բացասական կողմերի վերլուծությունը, ինչի հիման վրա հիմնավորվել է ընտրված տարբերակը՝ ելնելով շրջակա միջավայրի պահպանության և անվտանգության ապահովման նպատակահարմարությունից:

Կոմբինատի կողմից նախատեսվող գործունեության հարակից տարածքներում իրականացվել են մշտադիտարկումներ որոնց արդյունքների համաձայն մթնոլորտային օդի որակը բնութագրող աղտոտիչների փաստացի կոնցենտրացիաները չեն գերազանցում բնակավայրերի համար սահմանված առավելագույն և միջին օրական ՍԹԿ-երը՝ բացառությամբ Բացահանք 1 և Բացահանք 2-ի տարածքներում /որոնց արդյունքները բերված են ՇՄԱԳ-ի հավելվածներում/:

Շինարարական աշխատանքներն իրականացվելու են մեկ փուլով, աշխատանքային օրերի ընդհանուր թվաքանակը կազմում է 1260 օր: Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում աշխատանքներում ներգրավված անձնակազմը իր կենցաղային կարիքների և հանգստի իրականացման համար օգտագործելու է Կոմբինատում արդեն իսկ առկա՝ հանգստի, հանդերձարանի, ցնցուղարանի և այլնի համար նախատեսված կառույցները:

Արտադրական պահեստի և օժանդակ շինությունների կառուցման փուլերում հիմնականում կատարվելու են՝ հողային աշխատանքներ, բետոնային և ամրանավորման աշխատանքներ (հիմքեր, հիմնային հեծաններ և այլն) և երկաթբետոնե կոնստրուկցիաների մոնտաժման աշխատանքներ: Կառուցման ընթացքում օգտագործվող հիմնական սարքավորումները և տեխնիկան ներկայացված են ՇՄԱԳ հաշվետվությունում, որոնց հիման վրա կատարվել են մթնոլորտային արտանետումների հաշվարկներ: Արտադրական պահեստի և օժանդակ շինությունների կառուցման աշխատանքները ուղեկցվելու են հողային հանույթի և փոշու առաջացմամբ: Հողը մշակվելու է էքսկավատորով: Քանի որ, նոր արտադրական պահեստը և օժանդակ շինությունները գտնվում են Կոմբինատի արտադրական հրապարակում՝ հողի բերրի շերտը բացակայում է: Արտադրական պահեստի և օժանդակ շինությունների կառուցման, բետոնե հենարանների և հիմքերի իրականացման համար օգտագործվելու են տարբեր մակնիշների բետոնե խառնուրդներ, մետաղական ամրաններ, խողովակներ և այլ կոնստրուկցիաներ: Բետոնը բերվելու է բետոնախառնիչով և մատուցվելու է բետոնապոմպով՝ Քաջարան քաղաքից (հեռավորությունը 3 կմ): Կիրառվող սարքավորումներն են՝ բետոնախառնիչները, ավտոհենաթափները և ավտոամբարձիչը:

Շինարարության ընթացքում օգտագործվող շինարարական տեխնիկական միջոցները պահվելու են կոմբինատի տարածքում՝ դրա համար նախատեսված վայրում:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մթնոլորտի հիմնական աղտոտիչներն են.

- Շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում առաջացող գազանման արտանետումները (վառելիքի այրման արդյունքում),
- Հողային/փորման աշխատանքների և գրունտի տեղափոխման ընթացքում, ինչպես նաև շահագործվող տեխնիկայի շարժից առաջացող փոշին:

Մթնոլորտային արտանետումների աղբյուրները դիտարկվել են որպես չկազմակերպված, իսկ կիրառվող սարքավորումները և շին. տեխնիկան՝ գազային արտանետումների շարժական աղբյուրներ: Իրականացվել են փոշու արտանետումների և տրանսպորտային միջոցների և շինարարական տեխնիկայի գազանման արտանետումների հաշվարկներ:
Արտադրական պահեստի և օժանդակ շինությունների կառուցման համար կիրառվող սարքավորումներից և շին.տեխնիկայից ընդհանուր գազային արտանետումների կանխատեսվող քքանակները կկազմեն 8.71 տ (առանց CO_2 գազի), ընդհանուր փոշենման արտանետումները՝ 2.0382 տ: Առավելագույն փոշու արտանետումները կդիտվեն տարածքի նախապատրաստական (հարթեցման) աշխատանքների արդյունքում իրականացվող հողային աշխատանքների ընթացքում: Արտանետումները հիմնականում շարժական աղբյուրներից (mobile polluter) են, արտանետումների տեսակը մերձգետնյա է (արտանետման աղբյուրի բարձությունը չի գերազանցում 3 մ-ը), հետևաբար արտանետումները չեն կարող ցրվել մեծ հեռավորությունների վրա և ՀՊՄԿ-ի գազային արտանետումների հետ միասին ունենալ համալիր ազդեցություն:

Շինարարության ընթացքում մթնոլորտ փոշու արտանետման քանակը նվազեցնելու նպատակով կառուցման համար անհրաժեշտ բետոնը բերվելու է բետոնախառնիչ մեքենայով, այդպիսով բացառելով շին. հրապարակում բետոնի ստացման աշխատանքները, ինչպես նաև բոլոր հողային աշխատանքների ժամանակ իրականացվելու է շին. հրապարակի ջրցան, ինչը նույնպես նվազեցնում է փոշու արտանետումը մթնոլորտ:
Արտադրական պահեստի շահագործման փուլում ջերմացային գազերի նոր արտանետումներ չեն կանխատեսվում: Դրանք պայմանավորված են արտադրության ապահովման և սպասարկման սարքավորումների շահագործման ընթացքում ջերմոցային գազերի առկա արտանետումներով:

Նախատեսվող գործունեության բաղադրիչների կառուցման ժամանակ հիմնական ազդեցությունները ջրային ռեսուրսների վրա արտահայտվելու են ջրօգտագործման և կեղտաջրերով ջրային ռեսուրսների աղտոտման ձևով: ՇՄԱԳ հաշվետվության տեղեկատվության համաձայն արտադրական պահեստի և օժանդակ շինությունների կառուցման ընթացքում կպահանջվի 888.48մ^3 ջուր, որից 97.2մ^3 ծավալը՝ տեխնիկական նպատակով, իսկ 791.28մ^3 ծավալը՝ խմելու տնտեսական որակի: Թե տեխնիկական և թե խմելու տնտեսական որակի ջուրը մատակարարվելու է հենց ՀՊՄԿ-ից: Հաշվի առնելով Կոմբինատի ջրօգտագործման և ջրահեռացման հաստատված նորմաները, կառուցման փուլում օգտագործվող ջրի ծավալը էական ազդեցություն չի թողնի ջրային ռեսուրսների վրա և ջրասպառման վրա: Համաձայն կատարված հաշվարկների՝ կառուցման փուլում կառաջանան 775 մ^3 ծավալով կեղտաջրեր, որոնք ուղղվելու են Քաջարան քաղաքի կոյուղի համակարգ, կեղտաջրերից ջրային ռեսուրսների վրա ազդեցություն չի կանխատեսվում:
Արտադրական պահեստի և օժանդակ շինությունների կառուցման ընթացքում կառաջանան հետևյալ տեսակի թափոնները՝

- Շինությունների ապամոնտաժումից շինարարական աղբ (ծածկագիր՝ 91200601 01 00 4)1, քանակը՝ 26տ,
- Կենցաղային աղբ (ծածկագիր՝ 91200400 01 00 4)[2], քանակը՝ 0.1տ,
- Սև մետաղի ջարդոն (ծածկագիր՝ 35131100 01 00 4)[3], քանակը՝ 0.1տ,
- Գունավոր մետաղների (ալյումինի և պղնձի) ջարդոն (ծածկագրեր՝ 35310101 01 99 5 և 35310301 01 01 3)4, քանակը՝ 0.1տ,
- Եռակցման խարամ (ծածկագիր՝ 31404800 01 99 4), քանակը՝ 0.5տ,
- Հողային հանույթ (ծածկագիր՝ 31401100 08 99 5)5, քանակը՝ 34742 մ^3, որից 647 մ^3 օգտագործվելու է որպես հետլիցք, իսկ 34095 մ^3 տեղափոխվելու է բացահանքի տարածք:

Բոլոր առաջացող թափոնների համար շինարարական հրապարակում նախատեսված է լինելու պահման հարթակ, իսկ որոշ թափոնատեսակների համար նաև կոնտեյներներ: Շինարարական աղբի պարբերաբար հեռացվելու է մոտակա աղբավայր: Եռակցման խարամը փոքր քանակներով խառնվելու է կենցաղային աղբի հետ և տեղափոխվելու մոտակա աղբավայր:

Սև և գունավոր մետաղների ջարդոնը հավաքվելու է շին. հրապարակում և հանձնվելու մասնագիտացված ընկերությունների: Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ կապալառու կազմակերպության կողմից օգտագործվող տրանսպորտային միջոցները և շին. տեխնիկան սպասարկվելու ու նորոգվելու են մասնագիտացված կենտրոններում: Տրանսպորտային միջոցները լիցքավորվելու են Քաջարան քաղաքի լցակայաններում:

Արտադրական պահեստի և օժանդակ շինությունների կառուցման համար ընտրված կապալառու կազմակերպությունը/ները՝ մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը, պետք է մշակի հնարավոր արտակարգ պատահարների կանխարգելման և արտակարգ իրավիճակներին պատրաստվածության պլան: Շրջակա միջավայրի մշտադիտարկումը (բնապահպանական մոնիթորինգը) շրջակա միջավայրի բաղադրիչների, բնական էկոլոգիական համակարգերի, նրանցում ընթացող գործընթացների, դրական և բացասական տեղաշարժերի համալիր դիտարկումն է, որը թույլ է տալիս գնահատել և կանխատեսել շրջակա միջավայրի իրավիճակի փոփոխությունները: Նախատեսվող գործունեության կառուցման փուլի համար ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացվել է բնապահպանական մշտադիտարկման պլանը՝ մշտադիտարկման գործողություններով: Հաշվետվության հավելվածներում ներկայացված է «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ Կառավարության 22.02.2018թ.-ի №191-Ն որոշման համաձայն մշտադիտարկումների պլանով իրականացված մշտադիտարկումների արդյունքները և նախատեսվող գործունեության տարածքի մոտակայքում 2024-2025 թվականներին իրականացված մթնոլորտային օդի, աղմուկի, ջրի և հողի որակի մոնիթորինգի արդյունքները:

Պատճառաբանական մաս. Փորձաքննության փուլում, Օրենքով սահմանված կարգով Սյունիքի մարզի Քաջարան քաղաքում անցկացված հանրային լսումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: 2-րդ հանրային լսման ընթացքում մասնակիցների կողմից բարձրացվել են հարցեր արտադրական տարածքի սանիտարապաշտպանիչ գոտու ապահովման, պահեստի ինժեներական լուծումների և կանաչապատման աշխատանքների վերաբերյալ, որոնք հաշվի են առնվել նախաձեռնողի կողմից, ներկայացվել են լրացուցիչ հիմնավորումներ

(գրավոր, բանավոր) և փորձաքննական եզրակացությունում ամրագրվել են որպես պարտադիր կատարման ենթակա փորձաքննական պահանջներ:

Փորձաքննական գործընթացում հաշվի են առնվել ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ գործընթացի մասնակիցներից (շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներ, առողջապահության, ներքին գործերի, ԿԳՄՍ նախարարություններ, կադաստրի կոմիտե, Սյունիքի մարզպետարան և Քաջարանի համայնքապետարան) ստացված կարծիքները:

Ելնելով վերոգրյալից և գնահատման արդյունքներից, նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ պետք է փաստել, որ՝

- կառուցվելու է ժամանակակից պահեստ, որտեղ կներդրվեն ավելի մեքենայացված «օպերացիաներ» (շահագործում), նյութերի և սարքավորումների ավելի ժամանակակից պահման գործելակերպեր,
- հողային ծածկույթի վրա ազդեցություն չի կանխատեսվում, քանի որ գործունեությունն իրականացվելու է «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի արտադրական տարածքում,
- ջրային ռեսուրսների վրա ազդեցություն չի կանխատեսվում, քանի որ արտադրական ջրօգտագործումն ու ջրահեռացումն իրականացվելու են Կոմբինատի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերից, կեղտաջրերն ուղվելու են Քաջարան քաղաքի կոյուղի համակարգ,
- մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված միջոցառումները նախատեսված են «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներին համապատասխան, շինարարության ընթացքում առաջացող արտանետումները էական ազդեցություն չեն ունենա Քաջարան քաղաքի օդային ավազանի աղտոտվածության վրա,
- թափոնների գործածության (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) և կառավարման միջոցառումները նախատեսված են «Թափոնների մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ Ընկերությունում առկա թափոնների կառավարման պլանին համաձայն:

Բնապահպանական բոլոր միջոցառումներն ամփոփվել են բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների պլաններում: Գործունեության իրականացման ընթացքում Հաշվետվությունում նախատեսված կանոնավոր մոնիթորինգի (բաց ջրավազաններ, մթնոլորտային օդի և հողի որակ, աղդեցության ենթակա բնակելի տարածքներ, կենսաբազմազանություն և այլն) միջոցառումների իրականացումը թույլ կտան արագ արձագանքել և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ շրջակա միջավայրի աղտոտումները կանխելու համար: Նախաձեռնողը պարտավորվել է նաև շինարարության ընթացքում իրականացնել շրջակա միջավայրի վրա առաջացող ազդեցությունները բացառող կամ նվազագույնի հասցնող լրացուցիչ միջոցառումներ (ներառյալ՝ ջրցանման համար նախատեսված թնդանոթ սարքավորումը, մթնոլորտային օդի չափիչ սարքավորումները, շրջակա միջավայրի բաղադրիչների մշտադիտարկումներ ոչ միայն ժամանակացույցով, այլ նաև ըստ անհրաժեշտության, և այլն):

Փորձաքննության արդյունքով կազմվել է փորձաքննական եզրակացությունը:

Փորձաքննական պահանջներ

Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման փուլերում անհրաժեշտ է ապահովել հետևյալ փորձաքննական պահանջների կատարումը.

1. նախագծման նորմատիվներին և բնապահպանական պահանջներին համապատասխան ապահովել տեխնոլոգիական լուծումները և ՇՄԱԳ հաշվետվությունում

ներկայացված բնապահպանական միջոցառումների իրականացումը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական և շահագործման հետ կապված բոլոր նորմերն ապահովելու համար:

2. Ապահովել արտադրական տեղամասում շինարարության և շահագործման փուլերի համար նախատեսված մշտադիտարկումների իրականացումը և հաճախականությունը՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջներին համապատասխան, ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված շրջակա միջավայրի բաղադրիչների մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

3. Շինարարական հրապարակից դուրս փոշու տարածումը կանխարգելելու նպատակով առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով (ըստ անհրաժեշտության ցանկապատել շինարարական հրապարակը, ջրցանել, սորուն նյութերը և հողային զանգվածները ծածկել անթափանց թաղանթով, բացառել շինարարական աղբի կուտակումները տարածքում, շինարարական աղբը և սորուն նյութերը տեղափոխել փակ ծածկով մեքենաներով՝ հատուկ սահմանված երթուղիներով, հատուկ վայրեր և այլն):

4. Արտադրական տարածքում շինարարության և շահագործման փուլերում առաջացող թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացնել ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան (վտանգավոր թափոնների գործածությունը՝ որպես լիցենզավորման ենթակա գործունեություն, իրականացնել համապատասխան լիցենզավորված կազմակերպության կողմից):

5. Արտադրական տարածքի սանիտարապաշտպանիչ գոտու տարածքում իրականացնել պաշտպանիչ շերտով ծառատունկ (ինչի վերաբերյալ հարցը բարձրացվել է նաև 2-րդ հանրային լսման ընթացքում):

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՄԿ» ՓԲԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված արտադրական պահեստի կառուցման նախագծային փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Էրիքնազ Մկրտչյան